

# PEARLS OF ARMENIAN HERITAGE

## Խաչատուր Աբովեան (1809 – 1848)

Հայ գրականության մեջ վիպագրության հիմնադիրը կարելի է համարել Աբովեանը: 1840-ին կ'աւարտէ *Վերջ Հայաստանի-Ողբ Հայրենասիրի* պատմական վէպը, որ առաջին տպագրութիւնը ունեցաւ 1858-ին Ներսիսեան Դպրոցի Տպարանէն:

Ծնած է Քանաքեռ գիւղը. նախնական կրթութիւնը ստացած է Էջմիածնի վանքին մէջ եւ յետոյ՝ Յարութին Ալամդարեանի Ներսէսեան վարժարանին մէջ. աւարտելուն՝ կոչուեցաւ Եփրեմ Ա. Ձորագեղցի Կաթողիկոսին քով գրագիրի եւ թարգմանի պաշտօնը վարելու: 1829-ին Դորպատի համալսարանին բնագիտութեան ուսուցչապետ Ֆրիտրիխ Պարրոտ կը հասնի Հայաստան, Մասիսի կատարը բարձրանալու՝ գիտական արշաւանքի յայտագիրով. Եփրեմ կաթողիկոսէն կը խնդրէ որ առաջնորդ մը տայ, եւ ան Աբովեանի կը յանձնէ այդ գործը: Գիտնականին եւ Աբովեանի միջեւ կը հաստատուի բարեկամութիւն եւ ուսուցչապետին միջնորդութեամբ Աբովեան կը կարողանայ յաճախել Դորպատի համալսարանը: 1830-ին Աբովեան կը մեկնի Դորպատ եւ վեց տարի կը հետեւի փիլիսոփայական եւ պատմական գիտութիւններու դասախօսութիւններուն՝ որպէս ազատ ունկնդիր, եւ այդտեղ կը սորվի գերմաներէն, ֆրանսերէն, ռուսերէն եւ լատիներէն, ծանօթանալով արեւմտեան գրականութեան եւ քաղաքակրթութիւններուն: 1836-ին վերադառնալով Հայաստան՝ մէկ տարի կը փորձէ իր ստացած գիտութիւնը տալ մատղաշ սերունդին, դպրոց մը բանալով Էջմիածնի վանքին մէջ. սակայն շուտով իրեն դէմ կը բարձրանայ հակառակութիւն, նկատելով զինք օտարացած, արդիականացած եւ բողոքականացած հայ մը: Վշտացած այս խորթ վարմունքէն, Աբովեան կ'երթայ Թիֆլիս 1837-ին, այդտեղ եւս կը հանդիպի նման հալածանքի. բայց առանց լքանելու՝ կը յաջողի ձեռք բերել ուսուցչութեան պաշտօն նահանգային վարժարանին մէջ, եւ անշուք կերպով օգտակար կ'ըլլայ հայ մանկութեան:

Իրեն դէմ հակառակութիւնը զօրանալով, Աբովեան Երեւան կը վերադառնայ 1843-ին, եւ տեսուչ կ'անուանուի գաւառական վարժարանին: Այստեղ եւս կը մշակէ գաղափարը դաստիարակելու հայ մանկութիւնը մայրենի լեզուին ծանօթութեան մէջ, որ կարելի պիտի ըլլար սեփական դպրոցով: Սակայն իր գաղափարը ընդունելի չեղաւ թէ Յովհաննէս Կարբեցի Կաթողիկոսին կողմէ, եւ թէ ռուսական գերատեսչութեան կողմէ:

Աբովեան մեծ յոյս ունէր որ Ներսէս Աշտարակեցիի կաթողիկոսական ընտրութեամբ միտքերը աւելի պիտի բացուէին, սակայն՝ այս անգամ իր անձնական կեանքին վերաբերեալ պատճառով ընդունելութիւն չգտաւ. արդարեւ, ան ծրագրելով հետապնդել իր դաստիարակչական ծրագիրը, կաթողիկոսէն խնդրեց ամուսնալուծութիւն՝ որպէս հոգեւորական նուիրուելու համար իր գաղափարականին: Սակայն կաթողիկոսը չընդունեցաւ Աբովեանի այս տարօրինակ խնդրանքը: Աբովեանի հայրենասէր գաղափարախօսութիւնը ընդունելի չէր մանաւանդ ռուսական վարչութեան, եւ Նիկոլա Ա կայսրին հակակրօնութիւնը կը վայելէր որեւէ ազգային բնոյթ կրող գործունէութիւն: 1848, մարտ ամսուն ազատ կ'արձակուի գաւառական վարժարանին տեսչութենէն, եւ ապրիլ 2-ին կ'անյայտանայ. վստահ չենք գիտեր մահուան պարագաները, բայց հաւանաբար ինք եւս զոհ ինկաւ, Լերմոնդովի, Պուշկինի, եւ Շելլենքոյի նման, կայսերական հալածանքին:

*(Քաղուած Հ. Մետրոպ Վրդ. Ճանաչեանի “Պատմութիւն Արդի Հայ Գրականութեան” առաջին հատորէն)*

